Հավելված
Հայաստանի Հանրապետության
հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի
2015թ. հոկտեմբերի 10-ի N 61-Ա որոշման

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեի նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	«Հանրաքվեի մասին» ՀՀ օրենք (ՀՄՕ) ՀՀ ընտրական օրենսգիրք (ԸՕ), հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
1	Դիտորդների հավատարմագրումն իրականացվում կամ հավատարմագրված դիտորդների ցանկում փոփոխություններ (լրացումներ) կատարվում է. ***հանրաքվե անցկացնելու մասին Հանրապետության Նախագահի հրամանագրի պաշտոնական հրապարակման օրվանից հետո, բայց քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ***	(ՀՄՕ) 23, մաս 1 (ԸՕ) 30, մաս 2	10.10.2015-ից մինչև 26.11.2015	Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով
2	Հանրաքվեի քարոզչության ժամանակահատվածը սկսվում է. ***հանրաքվե անցկացնելու մասին Հանրապետության Նախագահի հրամանագրի պաշտոնական հրապարակման օրվանից և ավարտվում քվեարկության օրվանից մեկ օր առաջ***	(ՀՄՕ) 20, մաս 3	10.10.2015 - 4.12.2015 մինչև ժամը 24:00	Քարոզչություն կատարողներ
3	Համայնքի տարածքում քարոզչական պաստառներ փակցնելու համար հատուկ տեղեր առանձնացնելու մասին որոշումն ընդունվում է. ***հանրաքվե անցկացնելու մասին Հանրապետության Նախագահի հրամանագրի պաշտոնական հրապարակման օրվանից ոչ ուշ, քան 5 օրվա ընթացքում***	(ՀՄՕ) 20, մաս 8 (ԸՕ) 20, մաս 3, 1-ին պարբ.	մինչև 14.10.2015	Երևանի քաղաքապետ, Համայնքի ղեկավար
4	Քարոզչություն կատարողներին անվճար հիմունքներով տրամադրվող դահլիճների և այլ շինությունների ցանկը հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով ներկայացվում է. ***հանրաքվեի նշանակումից ոչ ուշ, քան 7 օր հետո***	(ՀՄՕ) 20, մաս 2.1	մինչև 16.10.2015	Մարզպետ, Երևանի քաղաքապետ
5	10 000 և ավելի ընտրող ունեցող համայնքի դեպքում, քարոզչական պաստառներ փակցնելու համար հատուկ տեղեր առանձնացնելու մասին համայնքի ղեկավարի որոշումը կենտրոնական հանձնաժողով ներկայացվում է. ***որոշումն ընդունելուց հետո՝ 3-օրյա ժամկետում***	(ԸՕ) 20, մաս 3, 2-րդ պարբ.	մինչև 17.10.2015	Երևանի քաղաքապետ, Համայնքի ղեկավար
6	Հանրաքվեի քարոզչության ժամանակահատվածում եթերաժամ տրամադրող հեռուստաընկերությունները և ռադիոընկերությունները (անկախ սեփականության ձևից) իրենց վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը հրապարակում են. ***հանրաքվեի նշանակումից ոչ ուշ, քան 10 օր հետո***	(ՀՄՕ) 20, մաս 3.1 (ԸՕ) 19, մաս 4, 5	մինչև 19.10.2015	Հեռուստառադիո ընկերություններ

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	«Հանրաքվեի մասին» ՀՀ օրենք (ՀՄՕ) ՀՀ ընտրական օրենսգիրք (ԸՕ), հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
7	Համաժողովրդական քննարկումներ կազմակերպելու նպատակով հանրաքվեի դրվող նախագիծը հրապարակվում է. ***հանրաքվեի անցկացման օրվանից ոչ ուշ, քան 50 օր առաջ***	(ՀՄՕ) 7, մաս 8, 11, մաս 1, կետ 10	մինչև 17.10.2015	Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով
8	Զինվորական մասերում հաշվառված հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների թիվը զինվորական մասի տեղակայման վայրի համայնքի ղեկավարին, լիազոր մարմին և կենտրոնական հանձնաժողով ներկայացվում է. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 50 օր առաջ***	(ՀՄՕ) 3, մաս 4 (ԸՕ) 8, մաս 9	մինչև 17.10.2015	ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ ազգային անվտանգության ծառայություն, ՀՀ ոստիկանություն
9	Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններում դիվանագիտական ծառայություն անցնող հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների և նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի՝ հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անդամների ցուցակը լիազոր մարմին ներկայացվում է. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 50 օր առաջ***	(ՀՄՕ) 3, մաս 5 (ԸՕ) 60, ԿՀԸ որոշում 20.07.15թ. N 48-Ն	մինչև 17.10.2015	ՀՀ արտաքին գործերի նախարարություն
10	Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձանց (անկախ սեփականության ձևից) արտասահմանում տեղակայված ներկայացուցչությունների՝ հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող աշխատակիցների և նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի՝ հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անդամների ցուցակը լիազոր մարմին ներկայացվում է. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 50 օր առաջ***	(ՀՄՕ) 3, մաս 5 (ԸՕ) 60, ԿՀԸ որոշում 20.07.15թ. N 48-Ն	մինչև 17.10.2015	Իրավաբանական անձի ղեկավար
11	Հանրաքվեի քարոզչության ժամանակահատվածում վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից քարոզչություն կատարողների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանությունը հրապարակվում և կենտրոնական հանձնաժողով ներկայացվում է. ***հանրաքվեի նշանակումից ոչ ուշ, քան 20 օր հետո***	(ՀՄՕ) 20, մաս 3.1 (ԸՕ) 19, մաս 10	մինչև 29.10.2015	ՀՌԱՀ
12	Հանրաքվեի տեղամասերը կազմավորվում են. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 45 օր առաջ***	(ՀՄՕ) 18, (ԸՕ) 14, մաս 1	մինչև 22.10.2015	Լիազոր մարմին, մասնակցությամբ համայնքի ղեկավարի և ՀԸՀ անդամի
13	Տեղամասային կենտրոնները սահմանվում են. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 43 օր առաջ***	(ՀՄՕ) 18 (ԸՕ) 16, մաս 1	մինչև 24.10.2015	Երևանի քաղաքապետ, Համայնքի ղեկավար

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	«Հանրաքվեի մասին» ՀՀ օրենք (ՀՄՕ) ՀՀ ընտրական օրենսգիրք (ԸՕ), հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
14	Կալանավորված անձանց պահելու վայրում տեղամասային կենտրոնները սահմանվում են. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 43 օր առաջ***	(ՀՄՕ) 18, (ԸՕ) 16, մաս 1 (ԸՕ) 15, մաս 4	մինչև 24.10.2015	Քրեակատարողական հիմնարկի ղեկավար
15	Հանրաքվեի տեղամասերի հերթական համարները սահմանվում և կենտրոնական հանձնաժողով ներկայացվում են. ***սահմանվելուց հետո՝ 2-օրյա ժամկետում***	(ՀՄՕ) 12, մաս 1, կետ 2	մինչև 26.10.2015	Հանրաքվեի ընտրատարածքային հանձնաժողով
16	ՀՀ ընտրողների ռեգիստրը՝ ըստ հանրաքվեի տեղամասերի, կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում որոնման հնարավորությամբ տեղադրելու համար՝ էլեկտրոնային տարբերակով կենտրոնական հանձնաժողով ներկայացվում է. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 41 օր առաջ***	(ՀՄՕ) 17, (ԸՕ) 7, մաս 4 ԿՀԸ որոշում 20.07.15թ. N 48-Ն	մինչև 26.10.2015	Լիազոր մարմին
17	ՀՀ ընտրողների ռեգիստրը՝ ըստ հանրաքվեի տեղամասերի, կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում՝ որոնման հնարավորությամբ տեղադրվում է. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 41 օր առաջ***	(ՀՄՕ) 17 (ԸՕ) 7, մաս 4	մինչև 26.10.2015	Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով
18	Էլեկտրոնային եղանակով քվեարկող՝ հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակը կենտրոնական հանձնաժողով ներկայացվում է. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 41 օր առաջ***	(ՀՄՕ) 17, ԿՀԸ որոշում 20.07.15թ. N 48-Ն	մինչև 26.10.2015	Լիազոր մարմին
19	Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակներն էլեկտրոնային կրիչով կենտրոնական հանձնաժողովին տրամադրվում են. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 40 օր առաջ***	(ՀՄՕ) 17 (ԸՕ) 10, մաս 4	մինչև 27.10.2015	Լիազոր մարմին
20	Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակների մեկ օրինակ տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին տրամադրվում է. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 40 օր առաջ*** *Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակում քաղաքացու փվալների դիմաց առկա «էլ. քվեարկություն» նշումը նշանակում է, որ փվալ քաղաքացին ընդգրկված է էլեկտրոնային եղանակով քվեարկող քաղաքացիների ցուցակում*	(ՀՄՕ) 17 (ԸՕ) 10, մաս 1 ԿՀԸ որոշում 20.07.15թ. N 48-Ն	մինչև 27.10.2015	Լիազոր մարմին
21	Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակը տեղամասային կենտրոնում՝ բոլորի համար տեսանելի տեղում փակցվում է. ***քվեարկության օրվանից 40 օր առաջ***	(ՀՄՕ) 17 (ԸՕ) 11, մաս 3	27.10.2015-ին	Տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետող

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	«Հանրաքվեի մասին» ՀՀ օրենք (ՀՄՕ) ՀՀ ընտրական օրենսգիրք (ԸՕ), հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
22	Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակները՝ ըստ հանրաքվեի տեղամասերի, լիազոր մարմնի համացանցային կայքում՝ ներբեռնելու հնարավորությամբ տեղադրվում են. ***քվեարկության օրվանից 40 օր առաջ***	(ՀՄՕ) 17 (ԸՕ) 11, մաս 2	27.10.2015-ին	Լիազոր մարմին
23	Էլեկտրոնային եղանակով հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակը կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրվում է. ***ցուցակը ստանալուց հետո ոչ ուշ, քան 2-օրյա ժամկետում***	(ՀՄՕ) 17, ԿՀԸ որոշում 20.07.15թ. N 48-Ն	մինչև 28.10.2015	Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով
24	Հանրաքվեի քարոզչության հիմնադրամների ֆինանսական մուտքերի և ելքերի վերաբերյալ տեղեկանք կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացվում է. ***հանրաքվե անցկացնելու մասին Հանրապետության Նախագահի հրամանագրի պաշտոնական հրապարակման օրվանից հետո՝ եռօրյա պարբերականությամբ***	(ՀՄՕ) 21,մաս 7	12.10.2015 -ից սկսած եռօրյա պարբերականությամբ	ՀՀ կենտրոնական բանկ
25	Էլեկտրոնային եղանակով հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների թվին համապատասխան անհատական ծածկագրեր պարունակող ծրարները քվեարկողներին ուղարկելու համար՝ ՀՀ արտաքին գործերի նախարարությանը և համապատասխան իրավաբանական անձի ղեկավարին տրամադրվում են. ***էլեկտրոնային եղանակով քվեարկող քաղաքացիների ցուցակը ստանալուց հետո, ոչ ուշ, քան 10 օր հետո***	ԿՀԸ որոշում 20.07.15թ. N 48-Ն	մինչև 5.11.2015	Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով
26	Հանրային ռադիոյից և հանրային հեռուստատեսությունից անվճար և վճարովի եթերաժամ տրամադրելու կարգը և ժամանակացույցը սահմանվում է. ***եթերաժամ տրամադրելու համար սահմանված ժամկետից առնվազն 5 օր առաջ***	(ՀՄՕ) 20, մաս 3.1	մինչև 1.11.2015	Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով
27	Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցությունները հանրային ռադիոյի և հանրային հեռուստատեսության եթերաժամերից կարող են օգտվել. ***սկսած՝ քվեարկության օրվանից 30 օր առաջ***	(ՀՄՕ) 20, մաս 3.1	6.11.2015-ից	ՀՀ ԱԺ խմբակցություն (պատգամավորական խումբ)
28	Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրում ընդգրկված՝ հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ընդհանուր թիվը՝ նաև յուրաքանչյուր լրացուցիչ ցուցակում ընդգրկված քաղաքացիների թիվը հրապարակվում է. ***քվեարկության օրվանից առաջ՝ 30-րդ օրը***	(ՀՄՕ) 15 (ԸՕ) 6, մաս 8	6.11.2015-ին	Լիազոր մարմին

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	«Հանրաքվեի մասին» ՀՀ օրենք (ՀՄՕ) ՀՀ ընտրական օրենսգիրք (ԸՕ), հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
29	Հանրաքվեի տեղամասային հանձնաժողովների նախագահների և քարտուղարների պաշտոնների բաշխումը՝ ըստ հանրաքվեի տեղամասերի կատարվում է. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 30 օր առաջ***	(ՀՄՕ) 10,մաս 2 (ԸՕ) 42, մաս 5, ԿԸՀ որոշում 30.06.11թ. N 14-Ն	մինչև 6.11.2015	Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով
30	Հանրաքվեի տեղամասային հանձնաժողովում անդամներ նշանակելու մասին հայտերը կենտրոնական հանձնաժողով ներկայացվում են. ***քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 30, և ոչ ուշ, քան 25 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն***	(ՀՄՕ) 10,մաս 2 (ԸՕ) 42, մաս 6	6.11.2015 - 11.11.2015 մինչև ժամը 18:00	Աժ խմբակցություն ունեցող կուսակցու-թյուններ (կուսակցու-թյունների դաշինք), ԸՀ
31	Հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի առաջին նիստը տեղամասային կենտրոնում հրավիրվում է. ***կազմավորման օրվանից հետո՝ 3-րդ օրը, ժամը 12.00-ին***	(ՀՄՕ) 10,մաս 2 (ԸՕ) 42, մաս 7	14.11.2015 ժամը 12:00-ին	Հանրաքվեի տեղամասային հանձնաժողով
32	Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրում ընդգրկված հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ընդհանուր թիվը՝ նաև յուրաքանչյուր լրացուցիչ ցուցակում ընդգրկված քաղաքացիների թիվը հրապարակվում է. ***քվեարկության օրվանից առաջ՝ 20-րդ օրը***	(ՀՄՕ) 15 (ԸՕ) 6, մաս 8	16.11.2015-ին	Լիազոր մարմին
33	Քարոզչության հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացնում են. ***քվեարկության օրվանից 20 օր առաջ***	(ՀՄՕ) 21, մաս 5	16.11.2015-ին	Քարոզչության հիմնադրամ բացած քարոզչություն կատարողներ
34	Վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների կողմից քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ մշտադիտարկման արդյունքները և ՀՌԱՀ-ի եզրակացությունը հրապարակվում ու կենտրոնական հանձնաժողով ներկայացվում են. ***ոչ ուշ, քան քարոզչության համար սահմանված ժամկետի 10-րդ օրը***	(ՀՄՕ) 20, մաս 3.1 (ԸՕ) 19, մաս 11	19.10.2015-ին	ՀՌԱՀ
35	Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրում ընդգրկված հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ընդհանուր թիվը՝ նաև յուրաքանչյուր լրացուցիչ ցուցակում ընդգրկված քաղաքացիների թիվը հրապարակվում է. ***քվեարկության օրվանից առաջ՝ 10-րդ օրը***	(ՀՄՕ) 15 (ԸՕ) 6, մաս 8	26.11.2015-ին	Լիազոր մարմին
36	Զինվորական մասերում հաշվառված հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակները զորամասերում՝ զինծառայողների համար տեսանելի տեղում, փակցվում են. ***քվեարկության օրվանից 10 օր առաջ***	(ՀՄՕ) 17 (ԸՕ) 11, մաս 5	26.11.2015-ին	Զինվորական մասի հրամանատար

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	«Հանրաքվեի մասին» ՀՀ օրենք (ՀՄՕ) ՀՀ ընտրական օրենսգիրք (ԸՕ), հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
37	Քվեաթերթիկների տպագրման համար հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների թվի վերաբերյալ տեղեկատվություն (տեղեկանք)՝ ըստ ընտրատարածքների և հանրաքվեի տեղամասերի կենտրոնական հանձնաժողովին տրամադրվում է. ***քվեարկության օրվանից 10 օր առաջ***	(ՀՄՕ) 25,մաս 4	26.11.2015-ին	Լիազոր մարմին
38	Քվեաթերթիկի նմուշը սահմանվում է. ***քվեարկության օրվանից առաջ 10-րդ օրը***	(ՀՄՕ) 25,մաս 1	26.11.2015-ին	Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով
39	Քվեաթերթիկները տպագրվում են. ***քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 10, և ոչ ուշ, քան 3 օր առաջ***	(ՀՄՕ) 25,մաս 4	26.11.2015 - 3.12.2015	Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով
40	Էլեկտրոնային եղանակով քվեարկությունը սկսվում է. ***քվեարկության օրվանից 9 օր առաջ, Երևանի ժամանակով 08:00-ից***	ԿԸՀ որոշում 20.07.15թ. N 48-Ն	27.11.2015-ին ժամը 08:00-ից	Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով, քվեարկողներ
41	Վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների կողմից քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ մշտադիտարկման արդյունքները և ՀՌԱՀ-ի եզրակացությունը հրապարակվում ու կենտրոնական հանձնաժողով ներկայացվում են. ***ոչ ուշ, քան քարոզչության համար սահմանված ժամկետի 20-րդ օրը***	(ՀՄՕ) 20, մաս 3.1 (ԸՕ) 19, մաս 11	29.10.2015-ին	ՀՌԱՀ
42	Քարոզչության հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացնում են. ***քվեարկության օրվանից 10 օր առաջ***	(ՀՄՕ) 21, մաս 5	26.11.2015-ին	Քարոզչության հիմնադրամ բացած քարոզչություն կատարողներ
43	Քվեարկությանը մասնակցելու համար այլ համայնքի հաշվառում ունեցող հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիները ըստ հաշվառման վայրի ցուցակից ժամանակավորապես դուրս գալու և ըստ գտնվելու վայրի լրացուցիչ ցուցակում ընդգրկվելու մասին դիմում լիազոր մարմնի կամ նրա համապատասխան ստորաբաժանման ղեկավարին ներկայացնում են. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 7 օր առաջ***	(ՀՄՕ) 17 8, մաս 3	մինչև 29.11.2015	Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող ՀՀ քաղաքացիներ, Լիազոր մարմին

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	«Հանրաքվեի մասին» ՀՀ օրենք (ՀՄՕ) ՀՀ ընտրական օրենսգիրք (ԸՕ), հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
44	Հայաստանի Հանրապետությունում հաշվառում չունեցող հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիները քվեարկությանը մասնակցելու համար լրացուցիչ ցուցակում ընդգրկվելու մասին դիմում լիազոր մարմին ներկայացնում են. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 7 օր առաջ***	(ՀՄՕ) 25,մաս 8 (ԸՕ) 8, մաս 4	մինչև 29.11.2015	ՀՀ-ում հաշվառում չունեցող ՀՀ քաղաքացիներ, Լիազոր մարմին
45	Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակներում տեղ գտած անճշտությունները (այդ թվում՝ դիմողի անձին չվերաբերող) վերացնելու մասին դիմում լիազոր մարմին ներկայացվում է. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 5 օր առաջ*** *Դիմումը քննարկվում է 5 օրվա ընթացքում, սակայն քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 4 օր առաջ:*	(ՀՄՕ) 17 (ԸՕ) 12, մաս 1	մինչև 1.12.2015	Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիներ, Լիազոր մարմին
46	Ստացիոնար բուժման մեջ գտնվող և տեղամասային կենտրոն ինքնուրույն ներկայանալու հնարավորություն չունեցող քվեարկությանը մասնակցել ցանկացող հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակ լիազոր մարմին ներկայացվում է. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 5 օր առաջ՝ մինչև ժամը 14.00-ն***	(ՀՄՕ) 17 (ԸՕ) 8, մաս 6	մինչև 1.12.2015 մինչև 14.00-ն	Ստացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատության ղեկավար
47	Հանրաքվեի տեղամասային հանձնաժողովների կնիքները, դրոշմակնիքները և տեղամասային հանձնաժողովի անդամների անհատական կնիքները ընտրատարածքային հանձնաժողովին հանձնվում են. ***քվեարկությունից ոչ շուտ, քան 5, և ոչ ուշ, քան 3 օր առաջ***	(ՀՄՕ) 25,մաս 8 (ԸՕ) 58, մաս 3	1.12.2015 - 3.12.2015	Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով
48	Կալանավորված անձանց պահելու վայրում հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի նիստերին և քվեարկությանը ներկա լինելու ցանկություն հայտնած վստահված անձանց, դիտորդների և զանգվածային լրատվական միջոցների ներկայացուցիչների ցուցակը քրեակատարողական հիմնարկի ղեկավարին ներկայացվում է. ***քվեարկության օրվանից 5 օր առաջ***	(ՀՄՕ) 27 ԿԸՀ որոշում 29.07.11թ. N 44-Ն	1.12.2015-ին	Հանրաքվեի ընտրատարածքային հանձնաժողովի նախագահ
49	Էլեկտրոնային եղանակով քվեարկությունն ավարտվում է. ***քվեարկության օրվանից 5 օր առաջ, Երևանի ժամանակով 20:00-ին***	ԿԸՀ որոշում 20.07.15թ. N 48-Ն	1.12.2015-ին ժամը 20:00-ին	Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով, քվեարկողներ

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	«Հանրաքվեի մասին» ՀՀ օրենք (ՀՄՕ) ՀՀ ընտրական օրենսգիրք (ԸՕ), հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
50	էլեկտրոնային եղանակով քվեարկությանը մասնակցած, հանրաքվեի քվեարկության մասնակիցների ցուցակը լիազոր մարմին ներկայացվում է. ***էլեկտրոնային եղանակով քվեարկության սահմանված ժամկետի ավարտից ոչ ուշ, քան հաջորդ օրը՝ մինչև ժամը 12:00-ն***	ԿԸՀ որոշում 20.07.15թ. N 48-Ն	մինչև 2.12.2015 մինչև ժամը 12:00-ն	Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով
51	Քվեարկության օրը հանրաքվեի տեղամասեր գործուղվող ոստիկանության ծառայողների ցուցակը կազմվում է. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 4 օր առաջ՝ մինչև ժամը 14.00-ն***	(ՀՄՕ) 17 (ԸՕ) 8, մաս 5	մինչև 2.12.2015 մինչև ժամը 14.00-ն	ՀՀ ոստիկանություն
52	Համայնքում մեկից ավելի տեղամաս կազմավորվելու դեպքում քաղաքացիներին քվեարկության օրվա, հանրաքվեի տեղամասի համարի, քվեարկության տեղի և ժամանակի մասին ծանուցագիր ուղարկվում է. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 3 օր առաջ***	(ՀՄՕ) 17 (ԸՕ) 11, մաս 6	մինչև 3.12.2015	Լիազոր մարմին
53	Հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի նախագահը կամ քարտուղարն այդ պաշտոնից ինքնաբացարկի մասին դիմում ընտրատարածքային հանձնաժողովի նախագահին կարող են ներկայացնել. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 3 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն***	(ՀՄՕ) 10,մաս 2 (ԸՕ) 43, մաս 4 կետ 5	մինչև 3.12.2015 մինչև ժամը 18.00-ն	Հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի նախագահ, քարտուղար
54	Կալանավորված անձանց պահելու վայրերում գտնվող հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակները կազմվում են. ***քվեարկության օրվանից 3 օր առաջ***	(ՀՄՕ) 17 8, մաս 11	3.12.2015-ին	Քրեակատարողական հիմնարկի ղեկավար
55	Զինվորական մասում հաշվառված հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակը ընտրատարածքային հանձնաժողովի նախագահին տրամադրվում է. ***քվեարկության օրվանից 3 օր առաջ***	(ՀՄՕ) 17 10, մաս 5	3.12.2015-ին	Զինվորական մասի հրամանատար
56	Ըստ ընտրատարածքների և հանրաքվեի տեղամասերի հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների թվի վերաբերյալ տեղեկանք կենտրոնական հանձնաժողովին տրամադրվում է. ***քվեարկության օրվանից 3 օր առաջ***	(ՀՄՕ) 17 (ԸՕ) 10, մաս 2	3.12.2015-ին	Լիազոր մարմին
57	Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակներն էլեկտրոնային կրիչով կենտրոնական հանձնաժողովին տրամադրվում են. ***քվեարկության օրվանից 2 օր առաջ***	(ՀՄՕ) 17 (ԸՕ) 10, մաս 4	4.12.2015-ին	Լիազոր մարմին

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	«Հանրաքվեի մասին» ՀՀ օրենք (ՀՄՕ) ՀՀ ընտրական օրենսգիրք (ԸՕ), հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
58	Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակները (այդ թվում՝ լրացուցիչ ցուցակները)՝ ըստ տեղամասերի, և տեղամասում ընդգրկված բնակելի շենքերի (տների) հասցեները՝ տպագրված երկու օրինակից (ցուցակների, այդ թվում՝ լրացուցիչ ցուցակների 1-ին օրինակը՝ կազմված մատյանի ձևով, 2-րդ օրինակը՝ տեղամասային կենտրոնում փակցնելու համար), ինչպես նաև տեղամասային հանձնաժողովի կողմից քվեարկության օրը տեղամասում լրացուցիչ ցուցակ կազմելու համար անհրաժեշտ ձևաթղթերը հանրաքվեի տեղամասային հանձնաժողովների նախագահներին տրամադրվում են. ***քվեարկության օրվանից 2 օր առաջ***	(ՀՄՕ) 17 (ԸՕ) 10, մաս 3	4.12.2015-ին	Լիազոր մարմին
59	Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակի, այդ թվում՝ լրացուցիչ ցուցակների օրինակը (բացառությամբ՝ զինվորական մասում հաշվառված քաղաքացիների ցուցակների) տեղամասային կենտրոնում բոլորի համար տեսանելի տեղում փակցվում է. ***քվեարկության օրվանից 2 օր առաջ***	(ՀՄՕ) 17 (ԸՕ) 11, մաս 4	4.12.2015-ին	Հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի նախագահ
60	Քրեակատարողական հիմնարկի ղեկավարը հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակը հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի նախագահին հանձնում է. ***քվեարկության օրվանից 2 օր առաջ***	(ՀՄՕ) 17 (ԸՕ) 10, մաս 6	4.12.2015-ին	Քրեակատարողական հիմնարկի ղեկավար
61	Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակները՝ ըստ հանրաքվեի տեղամասերի, լիազոր մարմնի համացանցային կայքում՝ ներբեռնելու հնարավորությամբ տեղադրվում են. ***քվեարկության օրվանից 2 օր առաջ***	(ՀՄՕ) 17 (ԸՕ) 11, մաս 2	4.12.2015-ին	Լիազոր մարմին
62	Քվեարկության սենյակի կահավորումն ավարտվում է. ***քվեարկության նախորդ օրը՝ մինչև ժամը 24.00-ն***	(ՀՄՕ) 26 (ԸՕ) 55, մաս 3	5.12.2015 մինչև ժամը 24:00-ն	Համայնքի ղեկավար, հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի նախագահ
63	ՀՀ ընտրողների ռեգիստրում ընդգրկված հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ընդհանուր թիվը՝ նշելով նաև յուրաքանչյուր լրացուցիչ ցուցակում ընդգրկված քաղաքացիների թիվը, հրապարակվում է. ***քվեարկության նախորդ օրը***	(ՀՄՕ) 15 (ԸՕ) 6, մաս 8	5.12.2015-ին	Լիազոր մարմին
64	Հանրաքվեի տեղամասային հանձնաժողովների նախագահներին քվեաթերթիկները, քվեարկության ծրարները, փաթեթավորված կնիքը, դրոշմակնիքը, հանձնաժողովի անդամների անհատական կնիքները հանձնվում են. ***քվեարկության նախորդ օրը***	(ՀՄՕ) 26 (ԸՕ) 57,մաս 7, 10, (ԸՕ) 58, մաս 4,	5.12.2015-ին	Հանրաքվեի ընտրատարածքային հանձնաժողով

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	«Հանրաքվեի մասին» ՀՀ օրենք (ՀՄՕ) ՀՀ ընտրական օրենսգիրք (ԸՕ), հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
65	Հանրաքվեի տեղամասային հանձնաժողովին հանձնված բոլոր քվեաթերթիկները, հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակների էջերը ստորագրվում են. ***քվեարկության նախորդ օրը՝ մինչև ժամը 24:00-ն***	(ՀՄՕ) 26 (ԸՕ) 59, մաս 7	5.12.2015 մինչև ժամը 24:00-ն	Հանրաքվեի տեղամասային հանձնաժողով
66	Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացին իրեն ցուցակում ընդգրկելու մասին դիմում լիազոր մարմնին կարող է ներկայացնել. ***մինչև քվեարկության ավարտը***	(ՀՄՕ) 17 (ԸՕ) 12, մաս 2	6.12.2015 մինչև ժամը 20.00	Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների, Լիազոր մարմին
67	Քարոզչության հիմնադրամների հաշիվների հետ կապված բոլոր ֆինանսական գործողությունները դադարեցվում են. ***քվեարկությունից 1 օր առաջ*** ***<u>ֆինանսական գործողությունների կատարման վերջնաժամկետն է 2015թ.դեկտեմբերի 4-ը ներառյալ</u>***	(ՀՄՕ) 21,մաս 7	4.12.2015-ին	**Քարոզչություն կատարողներ**, ՀՀ կենտրոնական բանկ
68	Քվեարկության օրը տեղամասային կենտրոնում տեղամասային հանձնաժողովի նիստն սկսվում է. ***քվեարկության օրը՝ ժամը 07:00-ին***	(ՀՄՕ) 24 (ԸՕ) 62, մաս 1	6.12.2015 ժամը 07.00-ին	Հանրաքվեի տեղամասային հանձնաժողով
69	Քվեարկությունը սկսվում է. ***քվեարկության օրը ժամը՝ 08:00-ից***	(ՀՄՕ) 24 (ԸՕ) 54, մաս 1 (ԸՕ) 63, մաս 1	**6.12.2015 ժամը 08.00-ին**	Հանրաքվեի տեղամասային հանձնաժողով
70	Հանրաքվեի ընթացքի մասին տեղեկությունները հրապարակվում են. ***քվեարկության օրը ժամը 09:00-ից*** Քվեարկության օրը ժամը 12.00-ին, 15.00-ին, 18.00-ին և 21.00-ին հրապարակվում են տեղեկություններ՝ ըստ մարզերի (մարզում՝ նաև ըստ մարզկենտրոնների և մարզի 10.000-ից ավելի հանրաքվեի մասնակից ունեցող համայնքների) և Երևան քաղաքի, մինչև նախորդ ժամը քվեարկությանը մասնակցած քաղաքացիների թիվը: Քվեարկությանը մասնակցած քաղաքացիների թվի մասին տեղեկությունների հրապարակումից հետո դրանք ըստ հանրաքվեի տեղամասերի տեղադրվում են հանձնաժողովի համացանցային կայքում	(ՀՄՕ) 15 (ԸՕ) 6, մաս 10	Քվեարկության օրը՝ ժամը 09.00-ից, 12:00-ին, 15:00-ին, 18:00-ին և 21:00-ին	Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով
71	Ձերբակալված անձանց պահելու վայրում ձերբակալված քաղաքացիների ցուցակը կազմվում և ձերբակալված անձանց պահելու վայրում շրջիկ արկղի միջոցով քվեարկություն կազմակերպող տեղամասային հանձնաժողովի անդամին հանձնվում է. ***քվեարկության օրը***	(ՀՄՕ) 17 (ԸՕ) 10, մաս 7 ԿԸՀ որոշում 11.07.11թ. N 26-Ն	6.12.2015-ին	Ձերբակալված անձանց պահելու վայրի ղեկավար

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	«Հանրաքվեի մասին» ՀՀ օրենք (ՀՄՕ) ՀՀ ընտրական օրենսգիրք (ԸՕ), հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
72	Քվեարկությունն ավարտվում է. ***քվեարկության օրը ժամը՝ 20:00***	(ՀՄՕ) 24 (ԸՕ) 67, մաս 1	6.12.2015 ժամը 20:00-ին	Հանրաքվեի տեղամասային հանձնաժողով
73	Էլեկտրոնային քվեարկության արդյունքների ամփոփումը և քվեարկության արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունը հրապարակվում է. ***քվեարկության օրը, ժամը 20.00-ից հետո***	ԿԸՀ որոշում 20.07.15թ. N 48-Ն	6.12.2015 ժամը 20:00-ից հետո	Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով
74	Հանրաքվեի տեղամասում քվեարկության արդյունքներն ամփոփվում են և քվեարկության արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունը հրապարակվում է. ***ոչ ուշ, քան քվեարկության ավարտից 10 ժամ հետո***	(ՀՄՕ) 32,մաս 2 (ԸՕ) 71, մաս 5	7.12.2015 մինչև ժամը 06:00-ն	Հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի նախագահ
75	Հանրաքվեի փաստաթղթերի պարկը, չսահմանված նմուշի քվեարկության ծրարների փաթեթը, չօգտագործված քվեարկության ծրարների փաթեթը, քվեարկության արդյունքների արձանագրության երկու օրինակը, գրանցամատյանը, հանձնաժողովի կնիքը և դրոշմակնիքը ընտրատարածքային հանձնաժողով ներկայացվում են. ***քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում***	(ՀՄՕ) 32,մաս 2 (ԸՕ) 71, մաս 9 ԿԸՀ որոշում 30.06.11թ. թիվ 21-Ն	7.12.2015 մինչև ժամը 08:00-ն	Հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի նախագահ և քարտուղար
76	Հանրաքվեի տեղամասերում քվեարկության արդյունքների արձանագրությունների հիման վրա տվյալների մուտքագրումը համակարգիչ ավարտվում է. ***քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 18 ժամվա ընթացքում***	(ՀՄՕ) 33,մաս 2 (ԸՕ) 73, մաս 2 ԿԸՀ որոշում 29.07.11թ. թիվ 45-Ն	7.12.2015 մինչև ժամը 14:00-ն	Հանրաքվեի ընտրատարածքային հանձնաժողով
77	Հանրաքվեի քվեարկության նախնական արդյունքներն ամփոփվում, արձանագրությամբ վավերացվում, հանրային ռադիոյի և հանրային հեռուստատեսության ուղիղ եթերով պաշտոնապես հրապարակվում են. ***քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 24 ժամ հետո***	(ՀՄՕ) 34, մաս 1	7.12.2015 մինչև ժամը 20:00-ն	Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով
78	Տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին դիմումներն ընդունվում են. ***քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն***	(ՀՄՕ) 16 (ԸՕ) 48, մաս 1	7.12.2015 ժամը 12:00-ից մինչև ժամը 18:00-ն	Հանրաքվեի ընտրատարածքային հանձնաժողով
79	Հանրաքվեի տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության մեկ օրինակը կենտրոնական հանձնաժողով ներկայացվում է. ***քվեարկության ավարտից 24 ժամ հետո***	(ՀՄՕ) 33,մաս 3	7.12.2015 մինչև ժամը 20:00-ն	Հանրաքվեի ընտրատարածքային հանձնաժողով

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	«Հանրաքվեի մասին» ՀՀ օրենք (ՀՄՕ) ՀՀ ընտրական օրենսգիրք (ԸՕ), հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
80	Հանրաքվեի տեղամասային հանձնաժողովների կնիքները, դրոշմակնիքները կենտրոնական հանձնաժողով ներկայացվում են. ***քվեարկության ավարտից 24 ժամ հետո***	(ՀՄՕ) 25,մաս 8 (ԸՕ) 58, մաս 5 և 7 ԿԸՀ որոշում 29.07.11թ. N 41-Ն	7.12.2015 մինչև ժամը 20:00-ն	ԸՀ Երևանում, մարզերում՝ ԸՀ մասնագիտացված կազմակերպության միջոցով
81	Ընտրատարածքային հանձնաժողովներում վերահաշվարկի աշխատանքներն սկսվում են. ***վերահաշվարկի դիմումների ընդունման համար սահմանված ժամկետի հաջորդ օրը՝ ժամը 9.00-ից և դադարեցվում են քվեարկության օրվանից հետո՝ 5-րդ օրը, ժամը՝ 14.00-ին***	(ՀՄՕ) 16 (ԸՕ) 48, մաս 6	8.12.2015 ժամը 09:00-ից 11.12.2015 մինչև ժամը 14:00-ն	Հանրաքվեի ընտրատարածքային հանձնաժողով
82	Քարոզչության հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացնում են. ***քվեարկության օրվանից հետո՝ 3-րդ օրը***	(ՀՄՕ) 21,մաս 5	9.12.2015-ին	Քարոզչության հիմնադրամ բացած քարոզչություն կատարողներ
83	Վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների կողմից քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ մշտադիտարկման արդյունքները և հանձնաժողովի եզրակացությունը հրապարակվում ու կենտրոնական հանձնաժողով ներկայացվում է. ***հանրաքվեի արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից 2 օր առաջ***	(ՀՄՕ) 20, մաս 3.1 (ԸՕ) 19, մաս 11	մինչև 11.12.2015	ՀՌԱՀ
84	Հանրաքվեի քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը կազմվում, հանրաքվեի քվեարկության արդյունքներն ամփոփվում և արդյունքների վերաբերյալ որոշումն ընդունվում է. ***քվեարկության օրվանից հետո՝ 7-րդ օրը***	(ՀՄՕ) 34,մաս 2, 6 (ԸՕ) 35, մաս 1	13.12.2015-ին	Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով